


# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ Մարզկենտրոնը՝ ք. Վանաձոր



Տարածքը	<b>3789 քառ. կմ</b>
Գյուղատնտեսական հողատեսքեր	<b>192212 հա</b>
այդ թվում՝ վարելահողեր	<b>47823 հա</b>
Քաղաքային համայնքներ	<b>8</b>
Գյուղական համայնքներ	<b>105</b>
Գյուղական բնակավայրեր	<b>122</b>
Բնակչության թվաքանակը 2003թ. հունվարի 1-ի դրությամբ	<b>285.0 հազ. մարդ</b>
այդ թվում՝	
քաղաքային	<b>168.4 հազ. մարդ</b>
գյուղական	<b>116.6 հազ. մարդ</b>

ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդն է հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը), բնակչության թվաքանակով՝ երկրորդը (ք. Երևանից հետո): Գտնվում է հանրապետության հյուսիսում, սահմանակից է Վրաստանին: Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում է ՀՀ գլխավոր երկարություն:

ՀՀ Լոռու մարզն ընդգրկում է Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի, Գուգարքի տարածաշրջանները, Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր, Ախրալա, Թումանյան, Շամուղ քաղաքները: Մարզի բնակչության թվաքանակը 2003թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակի 8.9 %-ը: Բնակչության գրեթե 59.0 %-ը քաղաքաբնակ է:

Լոռու մարզի տարածքը զբաղեցնում է պատմական Հայաստանի Գուգարք նահանգի արևելյան կեսը (այս տարածքում X-XI դարերում գոյություն է ունեցել հայկական անկախ պետություն՝ Լոռու թագավորությունը, մարզի տարածքի մի մասը հանդիսացել է Զարարյանների տոհմական կալվածքը):

Մարզում ծովի մակերևույթից բարձրագույն կետը Թեժ լեռան գագաթն է (3101մ), ամենացածրը՝ Դեբեղ գետի ստորին հոսանքի շրջանը (մոտ 380 մ):

Բազմաբնույթ են տարրեր դարերից ժառանգած ճարտարապետական հուշարձանները: Պետսական պահպանության տակ են գտնվում մոտ 3000 հուշարձաններ: Առանձնապես ուշագրավ են Սանահինի ու Հաղպատի համալիրները, Օծունի վանքային համալիրը, Ախթալայի վանքային համալիրն ու բերդը, Լոռիբերդի և Տաշիրի բերդի ավերակները, Սպիտակի քարայր-կացարանները և պղնձեղարյան բնակատեղին, Վանաձորի V դարի վանքերը, Թագավորանիստ բնակատեղի ամրոցը, կիկլոպյան 2 ամրոցների մնացորդները, Չոսի ճորժեր պղնձեղարյան բնակատեղին, Դսեղի և Գրիգոր Բարձրաքաջ վանքը և այլն:

**Սանահինի վանքը** (ըստ Հ.Աճառյանի, վերծանվում է որպես Սան-հին՝ «հին կարաս» անվամբ) հայ միջնադարյան ճարտարապետության աշքի ընկնող համակառույցներից է և նշանակալի դեր է կատարել հայ հոգևոր ու մշակութային կյանքում: 1000-ամյա պատմություն ունեցող այս վանքում հայ դպրության գործին իրենց հարուստ գիտելիքներն են ի սպաս դրել մշակութային և կրոնական նշանավոր գործիներ Դիոսկորոս կարողիկոսը, Անանիա, Հակոբ և Հովհաննես Սանահինեցիները, Գր.Տարևորդին, մագիստրոս Գր. Պահլավունին: Հոգևոր դպրոցի սաներից է եղել մեծ երգիչ Սայաթ Նովան:

**Սանահինի վանքը**, ինչպես նաև 6 կմ հեռավորությամբ գտնվող **Հաղպատի վանքը** հիմնադրվել են X դարի I կեսին: **Հաղպատի վանքը** Հայաստանի խոշորագույն և նշանավոր վանքային համալիրներից է, որում առավել շեշտված ձևով են դրսևորված միջնադարի հայ ճարտարապետության առանձնահատուկ գծերը՝ գեղատեսիլություն, շրջապատող միջավայրի հետ ներդաշնակ կապ, աշխարհիկ մտածողություն և աշխարհիկ շինությունների գերակշռություն: Հուշարձանը բնության և մարդկային արարչագործության հազվագյուտ ներդաշնակություն է: Վանքը հայտնի է որպես հայ միջնադարյան հոգևոր և մշակութային կարևոր կենտրոններից մեկը, խոշոր վանական կալվածատիրական հաստատություն:

Հաղպատի վանքը XII դարի կեսերից հանդիսացել է Կյուրիկյան թագավորության թեմական կենտրոնը: Այդտեղ արգասաքեր գործունեություն են ծավալել գիտնական, մատենագիր Դավիթ Զորայրեցին, բանաստեղծ Հ. Երզնկացի Ծործորեցին (Պլուզ), իրավագետ Դ.Ալավետ որդին և ուրիշներ: Այդտեղ է ընդօրինակվել Հաղպատի հոչակավոր ավետարանը (1211թ.): Հաղպատում կրոնավորել է մեծն Սայաթ Նովան:

1998թ. Երկրաշարժը, որի էպիկենտրոնը գտնվում էր Սպիտակից փոքր – ինչ հյուսիս, ընդգրկել էր մարզի այժմյան տարածքի մեծ մասը: Երկրաշարժի հզորությունն ըստ Ռիխտերի սանդղակի, Սպիտակ քաղաքում կազմել է 9-10 բալ, Կիրովականում՝ 8: 40 վայրկյան տևած ցնցումները հողին հավասարեցրին Սպիտակի բոլոր շինությունները, Կիրովականում փոլ եկավ 8000 բնակարան, Ստեփանավանում՝ 30 շենք ու 2500 տուն, Էաջես տուժեցին Գուգարքի, Թումանյանի, Տաշիրի շրջանները:

Երկրաշարժից անմիջապես հետո, աշխարհի մի շարք պետությունների, բազմաթիվ սրտացավ մարդկանց դրամական, նյութական ու ֆիզիկական օգնությամբ սկսված վերականգնողական աշխատանքները շարունակվում են մինչ օրս: Անցած 15 տարիների ընթացքում, մերք դանաղելով, մերք աշխուժանալով, մարզում կառուցվել են նոր բնակարաններ, դպրոցներ, արտադրական շինություններ, մշակույթի օբյեկտներ:

**ՀՀ Լոռու մարզի** արդյունաբերության տեսակարար կշիռը 2002թ. հանրապետության արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 4.9%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում՝ 10.5%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 2.5% և բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 3.3%:

2002թ. մարզում գործել են 101 արդյունաբերական, 16 գյուղատնտեսության, որտորդության և անտառային տնտեսության, 1 ձկնորսության ու ձկնաբուծության, 34 շինարարական, 16 տրանսպորտային, 294 ծառայություններ մատուցող, 982 մանրածախ առևտության գործող օբյեկտներ, որոնցից 290-ը խանութներ են, 655-ը՝ կրապակներ, 29-ը՝ հանրային սննունդի օբյեկտներ, 4-ը՝ գյուղատնտեսական արտադրանքի, 4-ը՝ սպառողական ապրանքների շուկաներ: Գործել են նաև 175 պետական և 1 ոչ պետական հանրակրթական, 24 երաժշտական և արվեստի, 15 մարզական դպրոցներ, 9 պետական և 3 ոչ պետական միջին մասնագիտական հաստատություն, 1 պետական և 6 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 58 պետական նախադպրոցական իիմնարկ, 132 գրադարան, 8 թանգարան, 4 հյուրանոց, 49 ամբողջատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 14 հիվանդանոց:

Մարզկենտրոնը **Վանաձոր** քաղաքն է (նախկինում՝ Սևծ “Ղարաքիլիսա, 1935-92թթ.՝ Կիրովական): Գտնվում է Փամբակ և Բագում լեռնաշղթաների միջլեռնային գոգավորությունում, Տանձուտ և Փամբակ գետակների միախառնման վայրում, ծովի մակերևույթից 1350մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից ավտոխճուղով 120 կմ է, երկարուղով՝ 224 կմ: Քաղաքի միջով հոսում են Տանձուտ և Վանաձոր գետերը:

Հնագետների աշխատանքի շնորհիվ պարզվել է, որ Տաշիր-Զորագետի շրջանը և հատկապես Վանաձոր քաղաքի տարածքը հարուստ են մեծ ու փոքր հնագիտական հուշարձաններով (Թագավորանիստ, Մաշտոցի բլուր, Չոսի ճորեր և այլն): Վանաձորի տարածքում գտնվող բնակավայրը մ.թ.ա. II դարում եղել է Սևծ Հայքի, իսկ մ.թ. X դարում՝ Կյուրիկյան թագավորության կազմի մեջ: Ենթադրվում է, որ Ղարաքիլիսա (Սև եկեղեցի) անունը բարարական է, տրվել է XIII դարի սկզբներին՝ Վանաձորի հյուսիսային բլրի վրա գտնվող սև քարից կառուցված եկեղեցու անունվ:

1801թ. Վրաստանի հետ Ռուսաստանին միացավ նաև Լոռին, և Ղարաքիլիսան դարձավ սահմանային գորակայան: 1849թ. Ղարաքիլիսան Երևանի նահանգի մեջ էր, 1870թ. Դիլջան-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ ճանապարհի, իսկ 1899թ.՝ Թիֆլիս-Ղարաքիլիսա-Ալեքսանդրապոլ երկարուղու, կայարանի, փոստատան և իջևանատների կառուցումը մեծապես նպաստել է գյուղաքաղաքի ձևավորմանը: 1935թ. Ղարաքիլիսան վերանվանվում է Կիրովական, իսկ 1992թ.-ից՝ քաղաքը կոչվում է Վանաձոր:

Երբեմնի արդյունաբերական հզորություններով հարուստ ու միաժամանակ առողջարանային կենտրոն համարվող քաղաքն այսօր չի համապատասխանում իր անվանը նախկինում կցվող բնորոշումներին: Նախկինում խոշոր արդյունաբերական կազմակերպությունների մեծ մասը դեռ չի գործում, մանկական ճամբարներն ու հանգստյան վայրերը պարապուրդի են մատնված, քաղաքի շրջակա անտառները հատված են:

2003թ. հունվարի 1-ի դրությամբ **Քանածորում** բնակվել է 106.3 հազ.մարդ, որը կազմում է մարզի քաղաքաբնակ բնակչության 63.1%-ը: 2002թ. քաղաքում գործել են 56 արդյունաբերական կազմակերպություններ, որոնց քողարկած արտադրանքի ծավալը կազմել է մարզի 2002թ. ցուցանիշի մոտ 24%-ը: Քաղաքում գործել է 642 մանրածախ առևտրի օբյեկտներ (134 խանութներ, 492 կրպակներ, 11 հանրային սննդի օբյեկտներ, 1 գյուղատնտեսական արտադրանքի և 1 սպառողական ապրանքների շուկաներ), որոնց միջոցով իրականացված ապունքա-շրջանառությունը կազմել է մարզի ապրանքաշրջանառության 70%-ը: Քաղաքում գործել են 23 շինարարական, 8 տրանսպորտային, 152 ծառայություններ մատուցող կազմակերպություններ, 35 հանրակրթական, 8 երաժշտական և արվեստի, 8 մարզական դպրոցներ, 6 նախադպրոցական, 5 պետական և 1 ոչ պետական միջին մասնագիտական և 6 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 25 գրադարան, 3 թանգարան, 5 հիվանդանոց, 12 ամբողջապահության հաստատություններ, 2 հյուրանոց:

### **Սպիտակի տարածաշրջան**

Վարելահողեր	11330 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	20
Գյուղական բնակավայրեր	20
Բնակչության թվաքանակը 2003թ. հունվարի 1-ի դրությամբ այդ թվում՝	41.5 հազ. մարդ
քաղաքային	15.0 հազ. մարդ
գյուղական	26.5 հազ. մարդ

2002թ. **տարածաշրջանում** գործել են 7 արդյունաբերական, 3 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 3 շինարարական, 1 տրանսպորտային, 20 ծառայություններ մատուցող, 89 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 43-ը՝ խանութներ են, 45-ը կրպակներ, 1-ը՝ հանրային սննդի օբյեկտ: Տարածաշրջանում գործել են 30 հանրակրթական, 2 երաժշտական ու արվեստի և 2 մարզական դպրոցներ, 2 նախադպրոցական հիմնարկ, 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 6 գրադարան, 2 հիվանդանոց և 5 ամբողջապահության հաստատություններ:

2002 թ. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Սպիտակի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 1.8 %, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 7 % և ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 3.6 %:

**Սպիտակ** քաղաքը (15.0 հազ. մարդ) գտնվում է Փամբակ գետի ափին, Երևանից 100 կմ, իսկ մարզկենտրոնից 20 կմ հեռավորության վրա: Զբաղեցնում է 1400 հա տարածք: Քաղաքի ներկայիս տարածքում բնակավայրեր են եղել դեռևս մ.թ.ա. III հազարամյակից սկսած: Այդ են վկայում մինչ օրս պահպանված քարայր կացարանները և քաղաքի հարավային մասում գտնվող պղնձեղարյան բնակատեղու հետքերը:

Քաղաքի տարածքում տեղաբաշխված Համամլու բնակավայրի մասին հիշատակումներ կան 1800-ական թթ.-ից, 1961թ. բնակավայրը անվանակոչվել է Սպիտակ: Ամբողջությամբ պերպետվել է 1988թ. աղետալի երկրաշարժից: Սպիտակը մինչ 1988թ.-ը հանրապետության

արդյունաբերական կենտրոններից էր, Սպիտակում էր գտնվում Հայաստանի միակ շաքարի գործարանը:

2002թ. քաղաքում գործել են 4 արդյունաբերական, 3 շինարարական, 1 տրանսպորտային, 17 ծառայություններ մատուցող, 30 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 1-ը՝ հանրային սննդի օբյեկտ է:

Քաղաքում 2002թ. գործել են նաև 9 հանրակրթական, 2 երաժշտական և արվեստի և 2 մարզական դպրոցներ, 2 նախադպրոցական հիմնարկ, 6 գրադարան, 1 հիվանդանոց և 2 ամբողջապահ-պոլիկլինիկական հիմնարկ:

2002թ.-ին շինարարական-վերականգնողական աշխատանքները Սպիտակում լայն թափով են ընթացել:

### **Ստեղծագործական տարածաշրջան**

Վարելահողեր	10152 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	18
Գյուղական բնակավայրեր	19
Բնակչության թվաքանակը 2003թ. հունվարի 1-ի դրությամբ այդ թվում՝ քաղաքային	33.4 հազ. մարդ
գյուղական	16.2 հազ. մարդ
	17.2 հազ. մարդ

2002թ. **տարածաշրջանում** գործել են 13 արդյունաբերական, 4 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 5 շինարարական, 2 տրանսպորտային, 26 ծառայություններ մատուցող, 64 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 55-ը՝ խանութներ են, 7-ը կրապակներ, 1-ը՝ հանրային սննդի օբյեկտ և 1-ը՝ գյուղարտադրանքի շուկա:

Տարածաշրջանում գործել են 26 հանրակրթական, 2 երաժշտական և արվեստի և 1 մարզական դպրոցներ, 7 նախադպրոցական հիմնարկ, 1 բարձրագույն ուսումնական հաստատություն, 2 թանգարան և 17 գրադարան, 1 հիվանդանոց և 10 ամբողջապահ-պոլիկլինիկական հիմնարկ:

2002 թ. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Ստավիանավանի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 2%, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 8 % և ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 10.3 %:

**Ստեղծագործական քաղաքի** (16.6 հազ.բնակչ) պարագիծը կազմում է 26.5 կմ, քրաղեցնում է 1666 հա տարածք, գտնվում է ծովի մակերևույթից 1375 մետր բարձրության վրա: Քաղաքի տարածքը շարունակաբար եղել է բնակատեղի վաղ բրոնզեդարյան շրջանից, որի ապացույցն են հանդիսանում «Լոռի բերդ»-ի տարածքի և Արմանիս գյուղի տարածքի վաղ բրոնզից մինչև ուշ բրոնզի դարաշրջանի բնակատեղիները և դամբարանադաշտերը: XVI-XVIII դարերում բնակատեղին կոչվել է Զալալողլի, իսկ 1930 քաղաքը վերանվանվել է Ստեղծագործական:

2002թ. քաղաքում գործել են 11 արդյունաբերական, 5 շինարարական, 2 տրանսպորտային, 26 ծառայություններ մատուցող, 8 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 1-ը՝ գյուղարտադրանքի շուկա:

Քաղաքում 2002թ. գործել են նաև 8 հանրակրթական, 2 երաժշտական և արվեստի, 1 մարզական դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկ, 1 բարձրագույն և 1պետական միջին ուսումնական հաստատություն, 1թանգարան, 2 գրադարան, 2 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 1 հիվանդանոց:

### ***Տաշիրի տարածաշրջան***

Վարելահողեր	12436 հա
Քաղաքային համայնքներ	1
Գյուղական համայնքներ	19
Գյուղական բնակավայրեր	23
Բնակչության թվաքանակը 2003թ. հունվարի 1-ի դրությամբ այդ թվում՝ քաղաքային	27.6 հազ. մարդ
գյուղական	9.4 հազ. մարդ
	18.2 հազ. մարդ

2002թ. **տարածաշրջանում** գործել են 8 արդյունաբերական, 4 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 1 ձկնորսության ու ձկնաբուծության, 1 տրանս-պորտային, 13 ծառայություններ մատուցող, 27 մանրածախ առևտրի կազմակերպություններ, որոնցից 9-ը՝ խանութներ են, 16-ը կրապակներ, 1-ը՝ հանրային սննդի օբյեկտ և 1-ը՝ գյուղարտադրանքի շուկա: Տարածաշրջանում գործել են նաև 23 հանրակրթական և 1 մարզական դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկ, 1 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, 21 գրադարան, 2 հիվանդանոց և 3 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ:

2002 թ. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Տաշիրի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 2.2 %, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 6 % և ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 1.5 %:

**Տաշիր** քաղաքի (9.4 հազ.մարդ) այժմյան տարածքում գոյություն են ունեցել հայկական բնակատեղիներ դեռևս մ.թ.ա. III հազարամյակից: Պահպանված են բազմաթիվ բնակատեղիներ հատկապես Զորագետ գետի ձախ ափին: Նշանավոր է Տաշիր բերդը, որը կառուցվել է մ.թ.ա. II հազարամյակի վերջում, բերդաբանքը հանդիսացել է Գուգարաց բղեշխության Տաշիր նահանգի կենտրոնը: Պատմության մեջ հայտնի է Տաշիրի մեծ իշխան Վրեն Տաշիրեցին, որը մասնակցել է 451թ. Ավարայրի ճակատամարտին:

Ներկայիս Տաշիր քաղաքը հիմնադրվել է 1834թ., որպես ոռուսական աքսորավայր և կոչվել է Վորոնցովկա, ապրել են հիմնականում ռուսներ: 1937թ. վերանվանվել է Կալինինո և գտնվել Ստեփանավանի շրջանի կազմում: 1961թ. առանձնացել է որպես քաղաքատիպ ավան, 1983թ.՝ հանրապետական Ենթակայության քաղաք: Տաշիր է վերանվանվել 1991թ.:

2002թ. քաղաքում գործել են 6 արդյունաբերական (սննդամբերքի արտադրություն, մասնավորապես՝ պանրի), 1 տրանսպորտային, 12 ծառայություններ մատուցող, 20 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 1-ը՝ հանրային սննդի օբյեկտ է և 1-ը՝ գյուղարտադրանքի շուկա: Քաղաքում գործել են նաև 3 հանրակրթական և 1 մարզական դպրոցներ, 4 նախադպրոցական հիմնարկ, 2 գրադարան, 2 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ, 1 հիվանդանոց:

## **Թումանյանի տարածաշրջան**

Վարելահողեր	7903 հա
Քաղաքային համայնքներ	4
Գյուղական համայնքներ	27
Գյուղական բնակավայրեր	34
Բնակչության թվաքանակը 2003թ. հունվարի 1-ի դրությամբ այդ թվում՝	48.8 հազ. մարդ
քաղաքային	21.5 հազ. մարդ
գյուղական	27.3 հազ. մարդ

2002թ. **տարածաշրջանում** գործել են 13 արդյունաբերական, 2 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 3 տրանսպորտային, 65 ծառայություններ մատուցող, 98 մանրածախ առևտրի գործող օբյեկտներ, որոնցից 19-ը՝ խանութներ, 76-ը՝ կրպակներ, 2 հանրային սննդի օբյեկտներ, 1 գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ: Տարածաշրջանում գործել են նաև 43 հանրակրթական, 10 երաժշտական և արվեստի, 2 մարզական դպրոցներ, 36 նախադպրոցական հիմնարկ, 1 միջին մասնագիտական և 1 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 3 թանգարան, 42 գրադարան, 2 հյուրանոց, 14ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 4 հիվանդանոց:

2002 թ. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում թումանյանի տարածաշրջանի տեսակարար կշռող կազմել է 67 %, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 6 % և ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 10 %:

**Ալավերդի** քաղաքը (17.1 հազ.մարդ) գտնվում է Դեբեղ գետի ափին (Երևանից 167 կմ հեռավորության վրա): Ալավերդու պղնձի հանքավայրերն օգտագործել են դեռևս պղնձե դարաշրջանում, XVIII դարի վերջերին ֆրանսիացիներն այստեղ կառուցել են առաջին պղնձաձոլական գործարանը: Քաղաքը ձևավորվել է գործարանի կառուցումից հետո: Պղնձաձոլական արտադրությունը գործում է նաև այսօր, որի արտադրանքը կազմել է Լոռու մարզի ցուցանիշի ծանրակշիռ մասը:

2002թ. քաղաքում գործել են 9 արդյունաբերական, 2 տրանսպորտային, 50 ծառայություններ մատուցող, 79 մանրածախ առևտրի կազմակերպություններ: Ալավերդի քաղաքում գործել են նաև 11 հանրակրթական և 1 մարզական դպրոցներ, 13 նախադպրոցական հիմնարկ, 1 պետական և 2 ոչ պետական միջին մասնագիտական և 1 բարձրագույն ուսումնական հաստատություններ, 2 թանգարան, 10 գրադարան, 1հիվանդանոց, 1 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկ և 2 հյուրանոց:

**Ալբալա** քաղաքը (2.4 հազ.մարդ) գտնվում է Դեբեղի ձախ ափին (Երևանից 185 կմ հեռավորության վրա), լեռնային դարավանդի վրա: Քաղաքի այժմյան տարածքում բնակատեղիներ գոյություն են ունեցել դեռ վաղնջական ժամանակներից: Ուշ բրոնզի դարաշրջանի դամբարաններն առաջիններից մեկը պեղել է հայտնի հնագետ Ժակ Դը Մորգանը՝ XIX դարում: Մատուցներ և վանքեր կառուցվել են IV դարից սկսած, որոնց մեծ մասը պահպանվում է: Հուշարձանային համալիրի գարդը վերականգնվող Ախտալայի հայտնի վանքն է, որը կառուցվել

է հին վանքի տեղում՝ X դարից հետո: Պահպանված է նաև բերդապարսպի մուտքի մասը՝ երկարգծից 50 մ-ի վրա:

2002թ. քաղաքում գործել են 1 արդյունաբերական (պղնձի խտանյութի արտադրություն), 4 ծառայություններ մատուցող կազմակերպություն: Քաղաքում գործել են նաև 2 հանրակրթական դպրոց, 3 նախադպրոցական հիմնարկ և 1 գրադարան:

**Թումանյան** քաղաքը (1.9 հազ.մարդ) գտնվում է Դեբեդի աջ ափին (Երևանից 152 կմ հեռավորության վրա): Քաղաքի տարածքի հնագույն ժամանակներից քնակեցված լինելու մասին վկայում են բազում մատուններն ու վաճքերը: Հատկապես հայտնի է Քոբայր վանքային համալիր՝ կառուցված VIII դարում:

Հետատերազմյան շրջանում տեղի հրակայուն կավի հումքի բազայի վրա կառուցվել է հրակայուն աղյուսի գործարան, որի շուրջն էլ ձևավորվել է ներկայիս Թումանյան քաղաքը:

Քաղաքում 2002թ. գործել են 2 արդյունաբերական, 4 ծառայություններ մատուցող կազմակերպություններ, 1 հանրակրթական և 1 մարզական դպրոցներ, 1 նախադպրոցական հիմնարկ, 1 բանգարան, 1 գրադարան և 1 ամբողջատոր-պոլիկլինիկական հիմնարկ:

**Շամուլ** քաղաքը (0.7 հազ.մարդ) գտնվում է Դեբեդ գետի ձախ ափին (Երևանից 203 կմ հեռավորության վրա): Տարածքի հուշարձանները վկայում են տարածքի վաղ շրջանում քնակեցված լինելու մասին: Հայտնի է իր պղնձի, արծաթի հանքավայրերով: XVI դարից հետո դարձել է հանքաշահագործման կարևորագույն կենտրոններից մեկն Հարավային Կովկասում: 2002թ. քաղաքում գործել է 2 ծառայություններ մատուցող կազմակերպություն, 1 հանրակրթական դպրոց, 3 նախադպրոցական հիմնարկ և 1 գրադարան:

#### **Գուգարքի տարածաշրջան**

Վարելահողեր	4201 հա
Քաղաքային համայնքներ	-
Գյուղական համայնքներ	21
Գյուղական քնակավայրեր	26
Բնակչության թվաքանակը 2003թ. հունվարի 1-ի դրությամբ	27.4 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	-
գյուղական	27.4 հազ. մարդ


2002թ. **տարածաշրջանում** գործել են 4 արդյունաբերական, 3 գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, 3 շինարարական, 1 տրանսպորտային, 18 ծառայություններ մատուցող, 62 մանրածախ առևտություն գործող օբյեկտներ, որոնցից 30-ը՝ խանութներ են, 19-ը կրապակներ, 13-ը՝ հանրային սննդի օբյեկտ:

Տարածաշրջանում գործել են 19 հանրակրթական, 2 երաժշտական ու արվեստի և 1 մարզական դպրոցներ, 3 նախադպրոցական հիմնարկ. 21 գրադարան և 5 ամբողջատոր-պոլիկլինիկական հիմնարկ: Տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը մեծամասամբ պայմանավորված է Վանաձոր քաղաքին մոտ լինելու հանգամանքով:

2002 թ. Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում Գուգարքի տարածաշրջանի տեսակարար կշիռը կազմել է 3 %, մանրածախ ապրանքաշրջանառության մեջ՝ 3 % և ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 5.7 %:



Հաղպատի վանքի խաչքար



Հաղպատի վանքի տեսարան

### ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՍՏԱՏԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Վանաձոր	թ. Վանաձոր
Ալավերդի	թ. Ալավերդի
	գ. Ակներ
Ախթալա	թ. Ախթալա
	գ. Առողջարանին կից
Թումանյան	թ. Թումանյան
	գ. Քոբեր կայարանի
Չամլուղ	թ. Չամլուղ
	գ. Ախթալա
	գ. Բենդիկ
Սպիտակ	թ. Սպիտակ
Ստեփանավան	թ. Ստեփանավան
	գ. Արմանիս
Տաշիր	թ. Տաշիր

### ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրերի անվանումը
Ազարակ	Ազարակ
Ազնվածոր	Ազնվածոր
Աթան	Աթան
Ահնիձոր	Ահնիձոր
Ամրակից	Ամրակից
Այգեհատ	Այգեհատ
Անտառամուտ	Անտառամուտ
Անտառաշեն	Անտառաշեն
Ապավեն	Ապավեն
Արդվի	Արդվի
Արծնի	Արծնի
Արջուտ	Արջուտ կայարանին կից
Արևածագ	Արևածագ
Արևաշող	Արևաշող
Աքորի	Աքորի
Բազում	Բազում
Բլագոդարնոյե	Բլագոդարնոյե
Բովածոր	Բովածոր
Գարգառ	Գարգառ
Գեղասար	Գեղասար
Գյուլագարակ	Գյուլագարակ
Գոզարան	Գոզարան
Գուգարք	Գուգարք
Դաշտադեմ	Դաշտադեմ
Դարպաս	Դարպաս
Դերես	Դերես

<b>Համայնքի անվանումը</b>	<b>Բնակավայրերի անվանումը</b>
Դսեղ	Դսեղ
Եղեգնուտ	Եղեգնուտ
Թեղուտ	Թեղուտ
Լեցան	Լեցան
Լեռնահովիտ	Լեռնահովիտ
Լեռնանցք	Լեռնանցք
Լեռնապատ	Լեռնապատ
Լեռնավան	Լեռնավան
Լերմոնտով	Լերմոնտով
Լոռի բերդ	Լոռի բերդ
Լորուտ	Լորուտ
Լուսաղբյուր	Լուսաղբյուր
Խնձորյան	Խնձորյան
Ծաթեր	Ծաթեր
Ծաղկաբեր	Ծաղկաբեր
Ծաղկաշատ	Ծաղկաշատ
Կաթնաղբյուր	Կաթնաղբյուր
Կաթնաջուր	Կաթնաջուր
Կաթնառատ	Կաթնառատ
Կաճաճկուտ	Կաճաճկուտ
Կարմիր Աղեգ	Կարմիր Աղեգ
Կողես	Կողես
Կուրթան	Կուրթան
Հազվի	Հազվի
Հալավար	Հալավար
	Գյուլլուդարա
	Հայդարի
	Քիլիսա
Հաղպատ	Հաղպատ
Հարթագյուղ	Հարթագյուղ
Հորարձ	Հորարձ
Հովհաննաձոր	Հովհաննաձոր
Զյունաշող	Զյունաշող
Զորագետ	Զորագետ
Զորագյուղ	Զորագյուղ
Զորամուտ	Զորամուտ
	Գոգավան
Ղուրսալ	Ղուրսալ
Ճոճկան	Ճոճկան
Մարգահովիտ	Մարգահովիտ
Մարց	Մարց
Մեղովկա	Մեղովկա
	Կրուգլայա շիշկա
Մեծ Այրում	Մեծ Այրում
	Փոքր Այրում
Մեծավան	Մեծավան
Մեծ Պառնի	Մեծ Պառնի
Մեղվահովիտ	Մեղվահովիտ

<b>Համայնքի անվանումը</b>	<b>Բնակավայրերի անվանումը</b>
Սիխայելովկա	Նորամուտ
Մղարթ	Միխայելովկա
Յաղդան	Մղարթ
Նեղոց	Յաղդան
Նովսելցով	Նեղոց
Նորաշեն	Նովսելցով
Նոր Խաչակապ	Նորաշեն
Շահումյան	Նոր Խաչակապ
Շամուտ	Շահումյան
Շենավան	Շամուտ
Շիրակամուտ	Շենավան
Շնող	Շիրակամուտ
Չկալով	Շնող
Պաղաղբյուր	Չկալով
Պետրովկա	Պաղաղբյուր
Պրիվոնյե	Պետրովկա
Պուշկին	Պրիվոնյե
Զիլիգա	Պուշկին
Զրաշեն	Զիլիգա
Սարպանց	Զրաշեն
Սարահարթ	Սարպանց
Սարամեց	Սարահարթ
Սարատովկա	Սարամեց
Սարչապետ	Սարատովկա
Սվերդլով	Սարչապետ
Վահագնաձոր	Սվերդլով
Վահագնի	Վահագնաձոր
Վարդարլուր	Վահագնի
ՈՒռուտ	Վարդարլուր
ՈՒրասար	ՈՒռուտ
Փամբակ	ՈՒրասար
Քարաբերդ	Փամբակ
Քարաձոր	Քարաբերդ
Քարինջ	Քարաձոր
Քարկոփ	Քարինջ
Օձուն	Քարկոփ
Ֆիոլետով	Օձուն
	Ամոց
	Ֆիոլետով